ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« —— » _____ 2010թ. Հ. _____

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ ՍԱՐԳԻՍ ՍԱԼՏԻԿՈՎԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 1999թ օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, պետական մրցանակի դափնեկիր Սարգիս Սալտիկովի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Տիգրան Մեծ պողոտայի հ.27 շենքի ճակատային հատվածում տեղադրելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախագծի հեղինակ
Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի
հանձնաժողովի փոխնախագահ **Ա. Ասատրյան**

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ ՍԱՐԳԻՍ ՍԱԼՏԻԿՈՎԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում աշխարհահռչակ գիտնական, գիտության վաստակավոր գործիչ, պետական մրցանակի դափնեկիր Սարգիս Սալտիկովի ներդրած մեծ ավանդը գիտության զարգացման գործում:

Սարգիս Սալտիկովը հանդիսանում է գիտության մի ամբողջ ուղղության՝ ստերեոլոգիայի հիմնադիրը:

Սալտիկովը դասվում է 20-րդ դարի հայ ամենահայտնի ինը գիտնականների շարքին, որոնց պատկերով և անունով դրոշմանիշները լույս են տեսել 2000թ. «Հայերը 20-րդ դարի մշակույթում» հոբելյանական թողարկման մեջ:

2005թ. օգոստոսին լրացել է Սարգիս Սալտիկովի 100-ամյակը:

Նախագծի հեղինակ
Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի
հանձնաժողովի փոխնախագահ **Ա. Ասատրյան**